ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/107

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից 13.12.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/107 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3 ծածկագրով կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն 24.10.2018թ. հայտ է ներկայացրել:

Գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն՝ Ընկերությունը 80 չափաբաժինների մասով, մասնավորապես՝ 10,13,47-48,63,67-68,140-141,151,159,69,93,97,34,37,50-52,60-62,70-72,76,79,80,94,101,103-105,111-115,126,127,133,146,157,6,8,11,15-17,43,46,56,73,74, 77,78,85,86,96,106,107,110,128-130,136,139,142-144,147,149,152,161,162,170 և 177-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից, ինչով պայմանավորված գնահատող հնաձնաժողովը դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները ճշտելու համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 423 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

Սակայն պետք է փաստել այն հանգամանքը, որ Ընկերությունը հայտը ներկայացնելիս առաջնորդվել է 24.10.2018թ. դրությամբ իր անձնական հաշվի քարտի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել: Ավելին Ընկերությունը ունեցել է շուրջ 136 253 ՀՀ դրամի չափով գերավճար:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հայտի մերժման գործընթացը:

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.12.2018թ թիվ ԴՎԱ/5237 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում որոշում է կայացվել սահմանված կարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայցնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է օրենքով սահմանված շեմը գերազնցող ժամկետոնց հարկային պարտավորություններ՝ 423 000 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ գնահատող հնաձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է Eauction.armeps.am համակարգում և նույն համակարգի միջոցով ծանուցվել մերժման հիմքերի վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***24.10.2018թ***. հայտ է ներկայացրել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ (Հավելված 1) Աճուրդի մի շարք չափաբաժինների մասով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 05.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 423 000 ՀՀ դրամի չափով:***

4. «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է Eauction.armeps.am համակարգում և նույն համակարգի միջոցով ծանուցվել մերժման հիմքերի վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի 13.12.2018թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ

պաշտպանության նախարարության 24.12.2018թ. թիվ ԴՎԱ/5237 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով էլեկտրոնային

աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***24.10.2018թ***. հայտ է ներկայացրել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ (Հավելված 1)՝ Աճուրդի մի շարք չափաբաժինների մասով, «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 01.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 05.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 423 000 ՀՀ դրամի չափով:***

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է Eauction.armeps.am համակարգում և նույն համակարգի միջոցով ծանուցվել մերժման հիմքերի վերաբերյալ:

ԳԲԽ-ԱՄ-2018/107 բողոքի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստին Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Սակայն Ընկերությունը հայտը ներկայացնելիս առաջնորդվել է 24.10.2018թ. դրությամբ իր անձնական հաշվի քարտի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել: Ավելին Ընկերությունը ունեցել է շուրջ 136 253 ՀՀ դրամի չափով գերավճար:

Միաժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 24.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)

Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 24.10.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է

օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.11.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 423 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը:

Վերը նշված հանգամանքով պայմանավորված, Ընկերության հայտը մերժվել է Eauction.armeps.am համակարգում և նույն համակարգի միջոցով Ընկերությունը ծանուցվել է մերժման հիմքերի վերաբերյալ:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընկերության 24.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 24.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային

համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից 13.12.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ